



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Առինջ
համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Առինջ Մաշտոցի փողոց
51, Հեռ. (010) 61 45 01, E-mail arinj-hamaynk@mail.ru
, arinj.kotayq@mta.gov.am

N 220
19 մարտ 2021թ.

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆՆԵՍՐՈՂ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի, Ձեզ ենք ներկայացնում Կոտայքի մարզի Առինջ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 12-ի թիվ 3 հերթական նիստի որոշումները, էլեկտրոնային տարբերակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ՀԱՅԿ ՄԿՐՏՉԱՆ

Կար. Առաջավար մասնագետ՝ Բ. Ղազարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 9-Ա

«Հ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 16-րդ հոդվածով. **Համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել համայնքի ավագանու 2021թվականի մարտի 12-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝


1. Առինջ համայնքի 2020թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
2. Առինջ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 8-ի N52-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
3. 2020թվականի Առինջ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվության մասին
4. Առինջ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
5. Առինջի համայնքային սեփականություն համարվող «Բ» թաղամաս 3-րդ փողոց թիվ 9 հասցեի գույքն ուղղակի վաճառքով օտարելու մասին
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ու շինությունը օտարելու մասին
7. Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին
8. Ֆինանսական աջակցություն ցուցաբերելու
9. Գնման պահանջը դադարեցնելու մասին

Կողմ-7

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. ԱՐՄԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2. ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3. ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4. ԼԱՌԻՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5. ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
6. ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7. ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Handwritten signature

ՀԱՅԿ ՄԿՐՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 10-Ա

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով. **Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2020թվականի բյուջեի կատարման մասին, համաձայն հավելվածի.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. ԱՐՄԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2. ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3. ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4. ԼԱՌԻՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5. ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
6. ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7. ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Handwritten signatures of the seven council members)



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

(Handwritten signature of the community leader)

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

.12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 11-Ա

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով **.Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Առինջ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 8-ի <<Կոտայքի մարզի Առինջ համայնքի <<Անահիտ Ծառուկյանի անվան բժշկական ամբուլատորիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2021թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N52-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1/որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և նրա գործողությունը տարածվում է 2021թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-7

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. ԱՐՄԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2. ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3. ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4. ԼԱՌԻՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5. ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
6. ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7. ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Handwritten signature

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
 Առինք համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 8-ի N52-Ա որոշման **ՓՈՓՈՐԿՄԱՆ**
 Առինք համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 27-ի N8-Ա որոշման **ՓՈՓՈՐԿՄԱՆ**
 Առինք համայնքի ավագանու 2021թվականի մարտի 12-ի N11-Ա որոշման

ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿ

ԱՆԱՀԻՑ ԾԱՌՈՒԿՅԱՆ ԵՎ ԱՆՎԱՆ ԲՃՇԿԱԿԱՆ ԱՄՖՈՒՆԻՍՈՒՄԻ ՀՈՒԿ 2021Թ

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Հաստիքային	Պաշտոնային դրույթաչափը	Հավելում	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8
1	Անահիտ Ծառուկյանի անվան բժշկական ամբուլատորիա	Տնօրեն	Վարչական	1	230000		230000
2		Հաշվապահ -օպերատոր	Վարչական	1	207000		207000
3		Ընտանեկան բժիշկ	բժիշկ	2	465265		930530
4		Սննդօրաֆիստ	բժիշկ	1	92617		92617
5		Ատամնաբույժ	բժիշկ	1	900000		90000
6	Անահիտ Ծառուկյանի անվան բժշկական ամբուլատորիա	Ընտանեկան բուժքույր	միջին բուժանձնակազմ	3	140000		420000
7		Ընտանեկան բուժքույր	միջին բուժանձնակազմ	1	128468		128468
8		Բուժքույր	միջին բուժանձնակազմ	1	115000		115000
9		Դպրոցի բուժքույր	միջին բուժանձնակազմ	1	106954		106954
10	Սանկիտար	Կրտսեր բուժանձնակազմ	Կրտսեր բուժանձնակազմ	1	112000		112000
11	Վարորդ	Այլ աշխատակազմ	Այլ աշխատակազմ	1	112000		112000
Ընդամենը				14			2544569

ՀԱՍՏԱՅՈՒՑԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

(Ստորագրություն)

ՀԱՅԿ ՄԿՐՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 12-Ա

2020ԹՎԱԿԱՆԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի՝ **Համայնքի ավագանին որոշում է.**

1. Ի գիտություն ընդունել 2020թվականի Առինջ համայնքի ղեկավարի հաշվետվությունը հաշվետու տարում հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. ԱՐՄԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2. ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3. ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4. ԼԱՌԻՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5. ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
6. ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7. ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Handwritten signatures in blue ink)



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

(Handwritten signature in blue ink)

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Առինք համայնքի ավագանու
2021թվականի մարտի 12-ի N 12-Ա որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՌԻՆՋ 2021

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի ընթացքում Առինջ համայնքի ղեկավարն իր աշխատանքային գործունեությունն իրականացրել է համայնքային ծառայողների, հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով: Առինջ համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել և համակարգվել են հետևյալ աշխատանքներն ըստ ոլորտների՝

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ

Կատարվել է քաղաքացիների թվով 24 ընդունելություն՝ օրենքով սահմանված կարգով, քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ժամանակին ու պատշաճ որակով դրանց տրվել է համապատասխան ընթացք: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը իրականացրել է թվով 6 նիստ, կատարվել են անչափահասների գործերով քաղաքացիների կյանքի հետազոտություն, 1 քաղաքացու նկատմամբ սահմանվել է խնամակալություն:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բնագավառ

Համայնքի բնակիչների համար ստեղծվել են բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով Առինջի համայնքապետարանի պաշտոնական՝ Arinj.am կայքը և facebook.com -ը:

Կազմակերպվել են թվով 3 հանրային բաց լսումներ՝ համայնքի բյուջեի նախագծի և բյուջեի փոփոխությունների վերաբերյալ, բյուջեի տարեկան կատարողականի ու հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ:

Ավագանու աշխատանքների կազմակերպման և իրավական ակտերի ընդունման բնագավառ

Կազմակերպվել և անցկացվել է ավագանու 12 նիստ, որի արդյունքում կայացվել է 73 որոշում: Համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 1570 որոշում և 50 կարգադրություն, կազմվել և ուղարկվել է 950 ելից գրություն: Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից կայացվել է 16 հրամաններ:

Ֆինանսների բնագավառ

Կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովվել է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացվել համայնքի ավագանուն: Ժամանակին և պատշաճ որակով հավաքագրվել է համայնքի վարչական տարածքում սահմանված տեղական հարկերը, տուրքերը, ինչպես նաև համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց գանձվող վճարները: Առինջ համայնքի 2020 թվականի բյուջեի եկամուտների նախատեսված ցուցանիշը ճշտված՝ 247320,1 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել են 453478,3 հազ. դրամ՝ ապահովելով բյուջեի եկամուտների 183,4 % կատարողական, այդ թվում՝ վարչական բյուջեի փաստացի եկամուտները՝ նախատեսված՝ ճշտված 233737,7 հազ.

դրամի դիմաց կազմել են 341496,1 հազ. դրամ, ապահովելով այդ մասով բյուջեի 146,1% կատարողական: Առինջ համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են, ճշտված՝ 161700,0 հազ. դրամ, փաստացի կազմել են 269458,4 հազ. դրամ, կամ 166,6%: Առինջ համայնքի 2020 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են 251659,6 հազ. դրամ ծախսեր, որը կազմում է նախատեսված՝ ճշտված ցուցանիշի 64,6%-ը: Ծախսային ծրագրերի թերակատարումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով: Համայնքի 2020 թվականի բյուջեի՝ հավելուրդը փաստացի կազմել է 352749,3 հազ. դրամ, որն իրենից ներկայացնում է 196526,8 հազ. դրամ վարչական բյուջեի տարեվերջի ազատ մնացորդը, 156222,5 հազ. դրամ՝ ֆոնդային բյուջեի տարեվերջի ազատ մնացորդը: Բյուջետային տարվա ավարտին պարտավորություններ չեն թողնվել և բյուջեի փաստացի կատարողականի սահմաններում ստանձնած պարտավորությունները հիմնականում ամբողջությամբ ֆինանսավորվել են, բացառությամբ գազի, ջրի և էլ. էներգիայի դեկտեմբեր ամսվա վճարները: Ստորև ներկայացվում է համայնքի 2020 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Համայնքի 2020 թվականի վարչական բյուջեի փաստացի եկամուտների 269458,4 հազ. դրամը, կամ 78,9 %-ը կազմել են սեփական եկամուտները: Համայնքի հարկերի և տուրքերի փաստացի ցուցանիշը բյուջեի սեփական եկամուտներում կազմում է 52%, այդ թվում՝ գույքային հարկեր անշարժ գույքից՝ 67539,2 հազ. դրամ, կամ 48,2%, գույքային հարկեր այլ գույքից՝ 58015,0 հազ. դրամ, կամ 41,4%, տեղական տուրքերը կազմել են 8470,2 հազ. դրամ կամ 6,0%: Համայնքի բյուջեի այլ եկամուտների փաստացի ցուցանիշը կազմում է 129394, 9 հազ. դրամ, կամ վարչական բյուջեի սեփական եկամուտների 48,0%-ը: Պաշտոնական դրամաշնորհները, այդ թվում՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան կազմում է վարչական բյուջեի փաստացի եկամուտների 26,7%-ը, կամ 72037,7 հազ. դրամ:

ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ

Համայնքի 2020 թվականի բյուջեի հարկերի և տուրքերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի շենքերից և շինություններից գույքահարկը, որի նախատեսված՝ ճշտված 55000,0 հազ. դրամ ցուցանիշի դիմաց փաստացի եկամուտները կազմել են 67539,2 հազ. դրամ: Հողի հարկը բյուջեի հարկերի և տուրքերի մեջ նախատեսված՝ ճշտված 7400,0 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 6038,9 հազ. դրամ, կամ հողի հարկի եկամուտների կատարողականը կազմել է 81,6%: Գույքային հարկեր այլ գույքից, այդ թվում՝ փոխադրամիջոցներից, նախատեսված, ճշտված՝ 40500,0 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել են 58015,0 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 133,9%:

Նախատեսված, ճշտված՝ տեղական տուրքերի 5290,0 հազ. դրամի նկատմամբ փաստացի ցուցանիշը կազմել է 8470,2 հազ. դրամ, կամ կատարողականը կազմել է 160,1%:

Պաշտպանության կազմակերպման բնագավառ

Օրենքով սահմանված կարգով վարվել է համայնքի զինապարտների գրանցամատյանը , նրանց վերաբերյալ ցուցակները: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցություն է ցուցաբերվել զորակոչի , զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը:

2020թվականին համայնքի բյուջեից կատարվել է զոհված զինվորների սգո ծառայության, ինչպես նաև բյուջեից տրամադրվել է դրամական աջակցություն 9 զոհված զինվորների ընտանիքներին, յուրաքանչյուր ընտանիքին 200 000 դրամ :

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառ

2020թվականին հաստեցվել և պարզաբանել է Առինջ համայնքի վարչական տարածքում տեղակայված պաշտպանական կառույցների և բնակչության պատսպարման վայրերը /նկուղիները/:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տրվել է 348 ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն):

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցվել է ճարտարապետաշինարարական նախագծերը, տրվել է 317 շինարարության թույլտվություն, սահմանված կարգով ձևակերպվել է 101 շինարարության շահագործման փաստագրման /ավարտական /ակտ:

Իրականացվել են "ԲԻԼԴ ՍԵՅՖ " ՍՊԸ-ի կողմից "Գ" թաղամասի գազաֆիկացման աշխատանքներ , որի ընդհանուր արժեքը կազմում է 8618,9 /հազար դրամ /, որից 4436,2 մասնաբաժինը կատարվել է համայնքի բյուջեի հաշվին, իսկ պետական բյուջեից ստացված սուբվենցիան կազմում է 4182,7 / հազար դրամ/ :

Համայնքի բյուջեի և պետական բյուջեի համաֆինանսավորմամբ պետք է կատարվեր 31246,0 /հազար դրամ / փողոցների արտաքին լուսավորության աշխատանքներ , սակայն այն հետաձգվել է և կատարվել է 2021թվականի հունվար ամսին:

Երկրում ռազմական իրավիճակից ելնելով սուբվենցիոն մեկ ծրագրի շրջանակում համայնքում կատարվել է նախատեսված ասֆալտապատման աշխատանքների 55%-ը , այն ամբողջությամբ կավարտվի 2021թվականի օգոստոս ամսին:

Ամբողջապես հիմնանորոգվել և ասֆալտապատման աշխատանքներ է կատարվել համայնքի Խ. Աբովյան թաղամասի 27-րդ փողոցը: Փոսային նորոգման աշխատանքներն են կատարվել համայնքի 1-ին, 2-րդ ,6-րդ 9-րդ 15-րդ 19-րդ փողոցները, Մաշտոցի փողոցը, Ձագավանքի փողոցը, Ձագավանքի փողոցի 2-րդ նրբանցքը և Պ. Սևակի փողոցը, Պ. Սևակի փողոցի 1-ին նրբանցքը:

Առինջի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ է կատարվել "Կոտայք" ՃՇՇ-ի կողմից: Այդ պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 241478,6 /հազար դրամ/, որից 132813,2 /հազար դրամ/ համայնքի բյուջեի հաշվին պետք է կատարվեր, իսկ 108665,3 /հազար դրամ/ պետական բյուջեից, սակայն ԼՂ-ի պատերազմի պատճառով

դադարեցվել էր աշխատանքները և կատարվել է ընդամենը 73575,2 /հազար դրամ/ -ի ասֆալտապատման աշխատանքներ:

2020թվականին համայնքի բյուջեի հաշվին " Անդրանիկ Մեջլումյան" ԱԶ-ի կողմից կատարվել է 8204,4 /հազար դրամ/ ներհամայնքային փողոցների փոսային նորոգման աշխատանքներ, կատարվել է նաև "Բալահովիտ 1 " ՍՊԸ-ի կողմից Խ. Աբովյան թաղամաս 27-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքներ, համայնքի բյուջեի հաշվին և տվյալ փողոցի բնակիչների ներդրման միջոցներով:

Իրականացվել են շաբաթօրյակներ, որի ընթացքում կազմակերպվել է ծառատունկ, իրականացվել է բարեկարգման աշխատանքներ:

Տրանսպորտի բնագավառ

Ճանապարհային երթևեկության համար համայնքի բյուջեի հաշվին ձեռք է բերվել ճանապարհային երթևեկության նշաններ՝ 45 հատ , որի արժեքը կազմում է 1085,0/ հազար դրամ/:

Ձմեռվա ընթացքում փոսերը ծածկելու նպատակով ձեռք է բերվել 600000 դրամ արժողությամբ խիճ :

Առևտրի և ծառայությունների բնագավառ

Օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացվել առևտրի և հանրային սննդի ոլորտներում:

Տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թվով 27 թույլտվություն, որի համար բյուջե մուտքագրվել է 1424,9 /հազար դրամ/, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ հանրային սննդի իրացման թվով 8 թույլտվություն , որի համար բյուջե մուտքագրվել է 380,0/ հազար դրամ/ և հանրային սննդի օբյեկտներում՝ հանրային սննդի , զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման և իրացման 24.00-ից հետո աշխատատեղի թվով 4 թույլտվություն :

Տրվել է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, սեղմված բնական կամ հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների և սեղմված բնական կամ հեղուկացված գազերի իրացման թվով 2 թույլտվություն, որի համար գանձվել է 410,0 /հազար դրամ/ :

Հողօգտագործման բնագավառ

Օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Անց է կացվել հողերի ընթացիկ հաշվառում և կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը: Օրենքով սահմանված կարգով և անհրաժեշտությունից ելնելով փոխվել է հողերի գործառնական և նպատակային նշանակությունը:

Տեղեկատվության բնագավառ

Համայնքապետարանի պաշտոնական կայքէջում և սոցիալական ցանցում լուսաբանվել են համայնքում տեղի ունեցող ճանապարհաշինարարական բարեկարգման աշխատանքները, մշակութային, սպորտային, երիտասարդական և սոցիալական միջոցառումները: Հրապարակվել է հայտարարություններ՝ հանրային լուսմների,

տոնական միջոցառումների, հանդիսությունների և սոցիալական ծրագրերի վերաբերյալ:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

Առինջի միջնակարգ դպրոցին ուսումնական տարվա ընթացքում տրամադրվել է 700,0 /հազար դրամ / դրամաշնորհ, 168030 դրամ ձեռք է բերվել գրեմական պիտույքներ 1-ին դասարանցիների համար:

Համայնքի մշակույթի տանը գործող "Վերածնունդ" պարային համույթի համար ձեռք է բերվել պարային բեմական հագուստ՝ 888,0/ հազար դրամ/-ի չափով:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ

Համայնքի մշակույթի տանը գործող կարատեի խմբակի մարզիկները և մարզիչները ս/թ մարտ ամսին մասնակցել են ՀՀ-ում կարատեի մեծահասակների առաջնությանը, որտեղ Գեղամ Նիկողոսյանը դարձել է ՀՀ չեմպիոն , իսկ Էրիկ Խաչատրյանը /ծնվ.՝ 2002թ./՝ փոխչեմպիոն:

Առինջի բուժ. ամբուլատորիային տրվել է դրամաշնորհ 1000,0/ հազար դրամ/:

Մշակույթի և սպորտի բնագավառներում իրականացված միջոցառումներ և ծրագրեր

- Ամանորյա բակային միջոցառումներ, թատերական ներկայացումներ, նվերներ համայնքի փոքրիկների համար
- Գիրք նվիրելու օրվա առթիվ գրական ցերեկույթ՝ համայնքի գրադարանում
- Հայրց բանակի օրվա առթիվ տոնական միջոցառում՝ Առինջի միջնակարգ դպրոցում
- Մայիսյան եռատոն, «Մայիսյան հաղթանակներ» տոնական միջոցառումների շարք, այդ թվում՝ համերգ, ցուցադրություն, գրական ցերեկույթ, քայլերթ
- Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում


Աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառ

Հաշվետու տարում համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ 2775,0 / հազար դրամ/ օգնություն, յուրաքանչյուր ընտանիքին՝ 20000-ից -30000 դրամի չափով :

Սոցիալական խնդիրների լուծման նպատակով համայնքի գոհված և հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

Մահվան ծախսերի փոխհատուցման համար համայնքի 5 անապահով ընտանիքներին տրամադրվել է՝ 430,0 / հազար դրամ/, յուրաքանչյուր ընտանիքին՝ 80 000 դրամ:

Կատարվել է ուսման վարձի համար մասնակի փոխանցում 80 000 դրամ, համայնքի չորս անապահով ընտանիքների՝ ուսանողների, որի ընդհանուր գումարը կազմում է 380,0 / հազար դրամ/:



**2020ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՆԳԱՄՅԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

2020թվականի ընթացքում համայնքում հնգամյա զարգացման ծրագրով համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝
Իրականացվել են "ԲԻԼԴ ՍԵՅՖ" ՍՊԸ-ի կողմից "Գ" թաղամասի գազաֆիկացման աշխատանքներ , որի ընդհանուր արժեքը կազմում է 8618,9 /հազար դրամ /, որից 4436,2 մասնաբաժինը կատարվել է համայնքի բյուջեի հաշվին, իսկ պետական բյուջեից ստացված սուբվենցիան կազմում է 4182,7 / հազար դրամ / :
Համայնքի բյուջեի և պետական բյուջեի համաֆինանսավորմամբ պետք է կատարվեր 31246,0 /հազար դրամ / փողոցների արտաքին լուսավորության աշխատանքներ , սակայն այն հետաձգվել է և կատարվել է 2021թվականի հունվար ամսին:
Երկրում ռազմական իրավիճակից ելնելով սուբվենցիոն մեկ ծրագրի շրջանակում համայնքում կատարվել է նախատեսված ասֆալտապատման աշխատանքների 55%-ը , այն ամբողջությամբ կավարտվի 2021թվականի օգոստոս ամսին:
Ամբողջապես հիմնանորոգվել և ասֆալտապատման աշխատանքներ է կատարվել համայնքի Խ. Աբովյան թաղամասի 27-րդ փողոցը: Փոսային նորոգման աշխատանքներն են կատարվել համայնքի 1-ին, 2-րդ ,6-րդ 9-րդ 15-րդ 19-րդ փողոցները, Մաշտոցի փողոցը, Ձագավանքի փողոցը, Ձագավանքի փողոցի 2-րդ նրբանցքը և Պ. Սևակի փողոցը, Պ. Սևակի փողոցի 1-ին նրբանցքը:
Առինջի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ կատարվել է "Կոտայք " ՃՇՇ-ի կողմից: Այդ պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 241478,6 /հազար դրամ/, որից 132813,2 /հազար դրամ/ համայնքի բյուջեի հաշվին պետք է կատարվեր, իսկ 108665,3 /հազար դրամ/ պետական բյուջեից, սակայն ԼՂ-ի պատերազմի պատճառով դադարեցվել էր աշխատանքները և կատարվել է ընդամենը 73575,2 /հազար դրամ/ -ի ասֆալտապատման աշխատանքներ:
2020թվականին համայնքի բյուջեի հաշվին " Անդրանիկ Մեջլումյան" ԱԶ-ի կողմից կատարվել է 8204,4 /հազար դրամ/ ներհամայնքային փողոցների փոսային նորոգման աշխատանքներ, կատարվել է նաև "Բալահովիտ 1 " ՍՊԸ-ի կողմից Խ. Աբովյան թաղամաս 27-րդ փողոցի ասֆալտապատման աշխատանքներ, համայնքի բյուջեի հաշվին և տվյալ փողոցի բնակիչների ներդրման միջոցներով:
Ճանապարհային երթևեկության համար համայնքի բյուջեի հաշվին ձեռք է բերվել ճանապարհային երթևեկության նշաններ՝ 45 հատ , որի արժեքը կազմում է 1085,0/ հազար դրամ/:

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 13-Ա

ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳԻՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի դրույթներով՝ **Համայնքի ավագանին որոշում է.**

- Հաստատել Առինջ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7

Դեմ-0

Ձեռնպահ-0

- ԱՐՄԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
- ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
- ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
- ԼԱՌԻՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
- ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
- ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
- ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Handwritten signatures of the seven council members)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



(Handwritten signature of the community head)

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 14-Ա

ԱՌԻՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ <<Բ>> ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ԳՈՒՅՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասի>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի և իրավահարաբերության պահին գործող 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի պահանջներով՝ **Համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ուղղակի վաճառքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող, Առինջ համայնքի Բ թաղամաս 3-րդ փողոց թիվ 9 հասցեում գտնվող (սեփականության վկայական N 25012021-07-0078), 07-011-0218-0009 կադաստրային ծածկագրով 0,09575 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը և նրա վրա գտնվող 12.15 մ² (արտաքին մակերես՝ 14.4մ²) մակերեսով մառանը՝ կառուցապատող Համլետ Գեղամի Մուրադյանին:

2. Առինջ համայնքի Բ թաղամաս 3-րդ փողոց թի 9 հասցեում գտնվող հողամասը և մառանը օտարել ինքնական կառույցն իրականացրած Համլետ Գեղամի Մուրադյանին՝ 4406610 (չորս միլիոն չորս հարյուր վեց հազար վեց հարյուր տաս) դրամ գնով, որից՝ հողամասի համար՝ 4331730 (չորս միլիոն երեք հարյուր երեսունմեկ հազար յոթ հարյուր երեսուն) դրամ, շինության համար՝ 74880 (յոթանասունչորս հազար ութ հարյուր ութսուն) դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2. ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ

- 3. ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
- 4. ԼԱՌԻՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
- 5. ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
- 6. ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
- 7. ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Handwritten signatures in blue ink, including names like 'Գրիգոր' and 'Սերոբ'.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Handwritten signature in blue ink.

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 15-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի պահանջներով. **Համայնքի ավագանին որոշում է՝**


- Թույլատրել համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ուղղակի վաճառքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող, Առինջ համայնքի Հ. Գասպարյան փողոց 1/1 հասցեում գտնվող (սեփականության վկայական N 18022021-07-0172), 07-011-0009-0102 կադաստրային ծածկագրով 0,00681 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը և նրա վրա գտնվող 55.46մ² (արտաքին մակերես՝ 68.14մ²) մակերեսով հասարակական նշանակության շինությունը՝ կառուցապատող Թագուհի Սարգսի Խլոյանին:
- Առինջ համայնքի Հ. Գասպարյան փողոց 1/1 հասցեում գտնվող հողամասը և շինությունը օտարել ինքնակամ կառույցն իրականացնող Թագուհի Սարգսի Խլոյանին՝ 1902561 (մեկ միլիոն իննհարյուր երկու հազար հինգ հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ գնով, որից՝ հողամասի համար՝ 308085 (երեք հարյուր ութ հազար ութսունհինգ) ՀՀ դրամ դրամ, շինության համար՝ 1594476 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսունչորս հազար չորս հարյուրյոթանասունվեց) դրամ:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7

Դեմ-0

Ձեռնպահ-0

- ԱՐՄԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
- ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
- ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
- ԼԱՌԻՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
- ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
- ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
- ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 16-Ա

ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-ին մասի և 6-րդ մասի, *Համայնքի ավագանին որոշում է*

1. Թույլատրել համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Հայկ Մկրտչյանին յուրաքանչյուր զոհված համայնքի բնակչի ընտանիքին տալ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-7

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. ԱՐՍԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2. ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3. ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4. ԼԱՌԻՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5. ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
6. ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7. ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Handwritten signatures of the seven members of the community council)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



(Handwritten signature of the community council head)

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Առինջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Առինջ, (010) 61 45 01 arinj-hamaynk@mail.ru ,arinj.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՄԱՐՏԻ 2021թվականի N 17-Ա

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի՝ **Համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Հայկ Մկրտչյանին համայնքի բյուջեի 4729 հոդվածից՝ Գեղամ Գևորգի Նիկողոսյանին տրամադրել անհատույց դրամական օգնություն 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-7

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. ԱՐՄԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
2. ԳԱՅԱՆԵ ՊԱԼՅԱՆ
3. ԳՐԵՏԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
4. ԼԱՌԻՐԱ ՄԻՐԶՈՅԱՆ
5. ՍԱՀԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
6. ՍԵՐՈԲ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
7. ՖԼՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ

